600.0131.12.04.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

12 ապրիլի 2017 թվականի №131Ն
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի №110Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2004 թվականի սեպտեմբերի 16-ի «Էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման կարգը հաստատելու մասին» №110Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի՝ էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման կարգի՝
   1) 1-ին գլխի «Փոխհոսքերը իրականացնող» պարբերությունում «Արտադրող» բառը փոխարինել «Լիցենզավորված անձ» բառերով.
   2) 4-րդ գլխի վերնագրում «ԱՐՏԱԴՐՈՂԻ» բառից հետո լրացնել «ԵՎ ՓՈԽՀՈՍՔԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂԻ» բառերը.
   3) 4.4 կետում «կողմից Իրանի Իսլամական Հանրապետություն» բառերից հետո լրացնել «և (կամ) Վրաստան» բառերը, իսկ «Իրանի Իսլամական Հանրապետությունից» բառերից հետո՝ «և (կամ) Վրաստանից» բառերը.
   4) 5.3 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «5.3 Տվյալ Հաշվարկային ժամանակահատվածի համար Հաղորդողի կողմից հաղորդված Բաշխողի և Որակավորված սպառողի էլեկտրաէներգիան ($W_{ՀԲ}$) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{ՀԲ}=\Sigma W_{Բ}+W_{Ն}+W_{ՈՍ}$$

որտեղ՝

$\Sigma W_{Բ}$-ն Արտադրողների (բացառությամբ մինչև 30ՄՎտ դրվածքային հզորություն ունեցող էլեկտրակայանների) և Փոխհոսքերն իրականացնողի կողմից Բաշխողին առաքված էլեկտրաէներգիայի քանակությունն է,

$W_{Ն}$-ն Ներկրողի (բացառությամբ Փոխհոսքերն իրականացնողի) կողմից Հաղորդողին հանձնված էլեկտրաէներգիայի քանակությունն է,

$W_{ՈՍ}$-ն Որակավորված սպառողների համար Հաղորդողի կողմից հաղորդված էլեկտրաէներգիայի քանակությունն է:».

5) 5.4 կետը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Հաղորդողի կողմից փոխհոսքերի շրջանակում հաղորդված էլեկտրաէներգիայի ծավալը որոշվում է փոխհոսքերի շրջանակում ներմուծված էլեկտրաէներգիայի քանակով և չի ներառում փոխհոսքերի շրջանակում արտահանված էլեկտրաէներգիայի ծավալը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
12 ապրիլի 2017թ.